ԳԼՈՒԽ ԺԵ.

ՀԱՅ — ԲՈԼՇԵՎԻԿԵԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ինչպէս տեսանք, խորհրդայնացումից անմիջապէս յետոյ, Ազրբէջանի Յեղկոմը վերջնագիր ուղարկեց Հայաստանին՝ պահանջելով դատարկել Ղարաբաղն ու Զանգեզուրը: Դեռ պատասխանը չստացած, մայիս 1-ին Հայաստանի կառավարութիւնը ստացաւ մի ուրիշ վերջնագիր, այս անգամ 11րդ զօրաբանակի հրամանատարութեան կողմից: Վերջնագիրը ասում էր.

«Հայաստանի և մեր բարեկամ Խորհրդային Ազրբէջանի սահմաններում շարունակւում են պատերազմական գործողութիւնները Հայաստանի և Ազրբէջանի միջև: Ռուսաստանի բանւորագիւղացիական կառավարութիւնը իր սրբազան պարտքն է համարում բոլոր ուժերով օգնութեան հասնել Ազրբէջանի համայն աշխատաւորութեան անունից օգնութիւն խնդրող խորհրդային կառավարութեան, որպէսզի Ազրբէջանում վերջնականապէս հաստատուի բանւորա-գիւղացիական կառավարութիւնը: Անգլիայի և Դաշնակցութիւն ու Մուսաւաթ կուսակցութիւնների գրգռումով հայկական և ազրբէջանեան զօրքերի միջև ազգային հողի վրա տեղի ունեցող թշնամութիւնները շահաւէտ են միայն ճնշած ժողովուրդների յաղթողների և Հայաստանի ու Ազրբէջանի աշխատաւոր դասակարգերի շահագործողների համար: Ազրբէջանի և Հայաստանի միջև եղած սահմանային բոլոր վիճելի հարցերը կարող են լուծուել միայն աշխատաւոր և ինքնորոշւող ժողովուրդների կամքով: Խորհրդային Ազրբէջանը չի կարող պաշտպանել և ո՛չ մի չովինիստական, ազգայնամոլ և յարձակողական գործ: Ազրբէջանում այլևս չի կարող գոյութիւն ունենալ միջազգային թշնամանք: Յանուն Ռուսաստանի Սոցիալիստական Դաշնակցական Խորհրդային Հանրապետութեան առաջարկում եմ Հայաստանի կառավարութեան անմիջապէս դադարեցնել ռազմական բոլոր գործողութիւնները Խորհրդային Ազրբէջանում և իր զօրքերը դուրս հանել նրա սահմաններից: Այդ բանը պէտք է արւի ներկայ հեռագրի ստացումից յետոյ 24 ժամւայ ընթացքին: Սոյն պահանջի չգործադրուելը կը նկատուի իբրև մարտահրաւէր ուղղած Ռ.Ս.Դ.Խ.Հ. հասցէին: Առաջարկը կիրառ-գործուի Ռուսաստանի կարմիր բանակի ուժերով, իսկ հետևանքների պատասխանատուութիւնը կընկնի հայկական կառավարութեան վրա: Կովկասեան ճակատի Յեղափոխական Բանակի Խորհուրդ—Օրջոնիկիձէ, Առաջին Բանակի Ռազմայեղափոխական Խորհուրդ — Ֆիրով, Մէխանոշին, Լեվանդովսկի. 1 մայիս, 1920թ.»:

Պարզ էր, ուրեմն. Խորհրդ. Ազրբէջանը Հայաստանի վերաբերմամբ անշեղ շարունակում էր մուսաւաթական Ազրբէջանի քաղաքականութիւնը, իսկ Խորհրդային Ռուսաստանը ամէն կերպ աջակցում էր նրան: Ի՞նչ էր մնում անել Հայաստանին. — բողոքել: Եւ ահա սկսւում է հեռագրական